/ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԷՍ-2019/14, 30.01.2019թ.

Բողոք բերող անձ՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ / դիալիզի համար անհրաժեշտ նյութերի և պարագաների ձեռքբերում.

Բողոքի պահանջը՝

Դադարեցնել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 ծածկագրով դիալիզի համար անհրաժեշտ նյութերի և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդը և և եթե կնքվել է պայմանագրեր, կնքված պայմանագրերը հայտարարել չեղյալ:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու

օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Գնումների հետ կապված բողոքները քննող անձին

Հասցե՝ 0010, ք.Երևան, Մելիք Ադամյան փ. 1

Բողոք բերող <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ

Լիազորված անձ՝ Արսեն Ազատի Մհերյան / նույն.քարտ՝ 005133251 տրված 20.05.2014թ. տրված 005-ի կողմից/

Էլ.հասցե՝ arsen_mheryan@mail.ru

Հեռ. 055-55-61-02

Իրավ. հասցե՝ ք. Երևան, Աբովյան 42-2

Գործուն. հասցե՝ ք.Երևան, Տիչինա 3-րդ նրբ.2/2

Պատվիրատու՝ << Զարիշատ Արամ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ

Հասցե՝ ք.Արմավիր, Շահումյան 3

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ << ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 >>

Առարկան՝ <<Դիալիզի համար անհրաժեշտ նյութեր և պարագաներ >>

ՀՀ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏԻՑ N 3439-19
5 «30» 01 2019 թ.

ԲՈՂՈՔ

«Զարիշատ Արամ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ -ի կողմից << ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 >> ծածկագրով « դիալիզի համար

անհրաժեշտ նյութեր և պարագաներ » ձեռքբերման նպատակով հայտարարվել է էլեկտրոնային աճուրդ, որի բացման օրը /էլեկտրոնային աճուրդի սկսելու/ եղել է 28.01.2019թ.-ին ժամը՝ 10:45-ին:

Բողոքի առարկան և հիմքն են հանդիսանում « Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ , 50-րդ հոդվածները և ՀՀ կառավարության 18 մայիսի 2017թվականի Թիվ 534-Ն որոշման 14-րդ կետը, այն է՝

14. Էլեկտրոնային աճուրդը չի կարող կազմակերպվել ժամը 16:00-ից հետո և ոչ աշխատանքային օրերին: Եթե էլեկտրոնային աճուրդն սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա էլեկտրոնային աճուրդը վերահայտարարված է համարվում տվյալ ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին:

Հաշվի առնելով վերոգրյալը, պարզ է դառնում, որ խախտվել է ՀՀ կառավարության 18 մայիսի 2017թվականի Թիվ 534-Ն որոշման 14-րդ կետը:

Խնդրում եմ

Դադարեցնել «Զարիշատ Արամ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ -ի կողմից << ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 >> ծածկագրով « դիալիզի համար անհրաժեշտ նյութեր և պարագաներ » ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդը և եթե կնքվել են պայմանագրեր, կնքված պայմանագրերը հայատարարել չեղյալ:

Կից ներկայացնում եմ լիազորագիրը, նույնականացման քարտի պատճենը և << ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 >> ծածկագրով մրցույթի վճարման անդորրագիրը:

Լիազորված անձ՝ Արսեն Մհերյան

« 30 » 01.2019թ.